

## Վարկատուների շահերի պաշտպանության արդի միջազգային գործընթացների վերլուծություն

### Նպատակը.

Սույն հետազոտության նպատակը վարկատուների շահերի պաշտպանության միջազգային լավագույն փորձի վերլուծությունն ու օրինակելի լուծումների բացահայտումն է:

### Խնդրի արդիականության ակնարկ.

Վարկատուների շահերի պաշտպանությունը անհրաժեշտ է դիտել վարկատուների իրավունքների ինստիտուտի թափանցիկության և ճկուն մեխանիզմների ապահովման, հստակ և կառուցողական սահմանների ամրագրման և վերջապես տեղաբաշխված ակտիվների վերադարձվելիության գործուն իրավական երաշխիքների ամրագրման ուղղություններով լուծումների ապահովմանն ուղղված քայլեր՝ երկրի օրենսդրական, արդարադատական, վերահսկողական ինստիտուտների գործադրմամբ:

Խնդիրը առավելապես սուր է վերջին շրջանում համաշխարհային ֆինանսական շուկաներում հայտնի բացասական զարգացումների պայմաններում, երբ «պարտքային միջադեպերի» ակտիվացմանը զուգահեռ առաջանում են շուկայի մասնակիցների իրավահարաբերությունների, վերահսկողական նորմերի և ընդհանրապես բիզնես-կառուցակարգերի լրացուցիչ ու նորոպի լուծումների պահանջ: Ֆինանսական ճգնաժամի արդի պայմաններում ֆինանսական գործակալների, այդ թվում նաև առևտրային բանկերի տեղաբաշխվող ակտիվների ներկա համեմատական սղության հաղթահարումը տնտեսությունների առողջացման հիմնական պայմաններից է: Անհրաժեշտ լուծումները պայմանավորված չեն միայն պետական միջամտությամբ ֆինանսական ներարկումներով, այլ ստեղծված իրավիճակում այդ հաղթահարումը գրեթե անհնարին է առանց վարկատուների պաշտպանության և աջակցության ինստիտուտի կառուցողական վերափոխումների:

Վերջապես, նշված իրավիճակը առավել սուր է և լուծման հրամայականները առավել հրատապ են անցումային շրջան վերապրած տնտեսություններում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում: Ներկայացնենք մեր երկրում առկա որոշ խնդիրներ, որոնք բացասաբար են անդրադարձնում վարկատուների շահերին և լրացուցիչ անգամ ընդգծում են խնդրի արդիականությունը.

1. Սովերային շուկայի զգալի առկայություն և տնտեսվարողների ու ներուժային վարկառուների գծով տեղեկատվության ասիմետրիկություն
  - որը հանգեցնում է
    - բանկերի համար վարկունակության գնահատման խիստ բարձր անորոշության
    - վարկային ռիսկի շրջանառվող միջին շեմի արհեստականորեն բարձրացման
2. Երկրի տնտեսության և հատկապես միկրոտնտեսական ցածր ցուցանիշներ, վարկառու ձեռնարկությունների կապիտալիզացիայի, նվազագույն ու միջին աշխատավարձերի խիստ ցածր մակարդակներ: Արդյունքում՝ վարկունակ պահանջարկի սակավություն:
3. 2009թ. ՀԲ-ի տվյալներով Հայաստանում վարկավորման գծով իրավական պաշտպանության ցուցանիշը 6 է (սանդղակը՝ 1-10), երբ արևելյան եվրոպայի և մերձավոր արևելքի տարածաշրջանի միջինը՝ 6.4 է (տես հավելված):*Այս ցուցանիշը ցույց է տալիս թե գրավի և սնանկության մասին օրենսդրությունը որքանով են պաշտպանում վարկատուների և վարկառուների շահերը և հետևապես նպաստում վարկավորման շուկայի ակտիվացմանը*
4. 2009թ. ՀԲ-ի տվյալներով Հայաստանի մասնավոր վարկային բյուրոյի (ռեգիստրի) ծածկույթի ցուցանիշը 24.4% է, երբ 183 երկրներից 10-ում մասնավոր վարկային բյուրոյի ծածկույթը 100% է, իսկ 33 երկրներում՝ 50% և ավելի:
5. 2009թ. ՀԲ-ի տվյալներով դատական համակարգի արդյունավետության գծով Հայաստանում գործընթացների թիվը 49 է, երբ 183 երկրների գծով այս ցուցանիշի միջինը միայն 38 է


Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկերի վարկավորման հետ կապված իրավունքների պաշտպանության գլխավոր խնդիրը իրավասությունների այնպիսի համակարգի ստեղծումն է, որտեղ անհրաժեշտ է ապահովել **բանկերի վերահսկողության նորմատիվների, վարկավորման և գրավի կառավարման** հարցերին վերաբերող օրենսդրության և դատական ընթացակարգերի միջև գործուն փոխառնչություններ և այդ ուղղություններում արդի տնտեսության պայմաններին համահունչ արդյունավետություն:

## Խնդրի հիմնական սահմանները.

Սույն հետազոտության շրջանակներում վարկատուների իրավունքների պաշտպանության հենքային սուբյեկտ է դիտվում բանկային համակարգը, հաշվի առնելով Հայաստանի ֆինանսական շուկայում բանկերի գերակա տեսակարար կշիռը և խնդրից բխող հիմնական իրավական դաշտում լայն ներառվածությունը:

Վարկատուի իրավունքը դիտվում է որպես իրավական տերմին, որը ենթադրում է վարկատուի պաշտպանությանն ուղղված գործողությունների շարք, հնարավորինս պարզեցնելով փոխատու միջոցների հավաքագրումը և բացառելով խնդրահարույց դեպքերի առկայությունը:

Այդպիսի գործողությունները ենթադրում են վարկատուի իրավասությունների համակարգ, որը կարող է ներառել վարկառուի սեփականության և աշխատավարձի վրա արգելանքի, բռնագրավման, ստիպողական վաճառքի (forced sale)<sup>1</sup>, ինչպես նաև վարկառուի կողմից նրա սեփականության գծով խաբուսիկ նվիրատվությունների և գործարքների բացառման իրավական հնարավորություններ: Վարկատուների իրավունքը ենթադրում է նաև երկրում վարկատուների շահերի պաշտպանության ինստիտուցիոնալ համակարգի առկայություն՝ փոխառնչությունների սկզբունքով (Գծ. 1):



**Գծանկար 1.** Վարկատուների շահերի պաշտպանության ինստիտուցիոնալ փոխանչությունների համակարգը

<sup>1</sup> [http://en.wikipedia.org/wiki/Forced\\_sale](http://en.wikipedia.org/wiki/Forced_sale)

Վարկատուի իրավունքները ոչ միայն փոխառնչվում են վարկառուների հանդեպ ունեցած իրավասություններին, այլև վարկատուների միջև իրավահարաբերություններին: Վարկատուի իրավունքների խնդիր է առաջանում նաև այն դեպքում երբ մի քանի վարկատուներ իրավունքներ են ունենում միևնույն սեփականության նկատմամբ կամ ընդհանրապես միևնույն վարկառուի միջոցների նկատմամբ: Այսպիսի վերլուծական օրինակ է բերված **TMA International Headquarters** կազմակերպության վերլուծաբանների նյութում [3], որտեղ գրավի նկատմամբ իրավունք ունեցող վարկատուները տարբերակվում են որպես իրավունքի իմաստով «ավագ» և «կրտսեր» վարկատուներ:

*Հայաստանի բանկային համակարգում առկա են նաև ընթացիկ անհետաձգելի խնդիրներ, որոնց լուծումը ուղղակիորեն առնչվում է վարկավորման շուկայի ակտիվացման և արդիականացման հետ, որոնցից առավելապես կարևոր են.*





1. *Գրավի կառավարման անորոշության մեղմացում,*
2. *Գրավի առարկաների իրացման ընթացակարգերի արդիականացում, արտադատական գործընթացների որոշակի ազատականացում,*
3. *Շարժական գույքի սեփականության և գրավի իրավունքի պետական գրանցման լուծումներ:*

### **Էկոնոմետրիկ նկարագրողական վերլուծություն**

Սույն աշխատանքի շրջանակներում, օգտագործելով Եվրոպական բանկային ֆեդերացիայի, Համաշխարհային բանկի և Եվրաստատի վիճակագրական աղբյուրները կատարվել է էկոնոմետրիկ վերլուծություն 33 երկրների գծով: Վերլուծության մեջ օգտագործվել են հետևյալ գործոնները. վարկավորման իրավական պաշտպանություն, Վարկ/ՀՆԱ, Դեպոզիտ/ՀՆԱ, Ակտիվներ /ՀՆԱ, Կապիտալ և պահուստներ/ՀՆԱ (տես հավելված): Արդյունքում պարզվել է, որ դիտարկված 33 երկրների գծով վարկավորման իրավական պաշտպանություն ցունացնիչը որոշակիորեն ու դրական է կորելացված նշված գործոնների հետ՝ կորելացիայի գործակիցը մինչև 0.4 սահմանում, ինչը խոսում է այն մասին, որ երկրում վարկատուների շահերի պաշտպանվածությունը կատարելագործումը կարևոր է այս ցուցանիշների բարձրացման համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարկ/ՀՆԱ, Դեպոզիտ/ՀՆԱ, Ակտիվներ /ՀՆԱ, Կապիտալ և պահուստներ/ՀՆԱ գործոնների վրա ուղղակի ազդեցություն ունեն նաև մակրոտնտեսական և այլ մի շարք այլ գործոններ, ստացված կորելացիայի գործակիցները կարելի է համարել խոսում: Ներքոհիշյալում ներկայացնենք նշված գործոնների կորելացիոն մատրիցը և կետային ամպերը.

Աղյուսակ 1  
Գործոնների կորելյացիո մատրից

Վարկավորման գծով իրավական պաշտպանության ցուցանիշ (0-10)	Վարկ/ՀՆԱ	Դեպոզիտ/ՀՆԱ	Ակտիվներ/ՀՆԱ	Կապիտալ և պահուստներ/ՀՆԱ	
Վարկավորման գծով իրավական պաշտպանության ցուցանիշ (0-10)	1				
Վարկ/ՀՆԱ	0.28920874	1			
Դեպոզիտ/ ՀՆԱ	0.39707914	0.752745	1		
Ակտիվներ /ՀՆԱ	0.32762958	0.632009	0.910518	1	
Կապիտալ և պահուստներ /ՀՆԱ	0.35398764	0.907693	0.880164	0.748342	1



Քճանկար 2. Գործոնների միջև տվյալների ամպերը

## Վարկատուների պաշտպանության արդի միջազգային դիտարկումներ.

Ուսումնասիրված միջազգային խորհրդատվական փաստաթղթերը, գիտական հետազոտությունները, ծրագրերը և օրենսդրությունը վկայում են, որ վարկատուների պաշտպանության ինստիտուտը առանձնակի կարևորություն է ձեռք բերել վերջին 2-3 տարիներին: Այս ինստիտուտի արդյունավետության բարձրացումը մի շարք հեղինակավոր նյութերում ուղղակիորեն կապվում է ամբողջ տնտեսության կայունության ապահովման, ինչպես նաև ֆինանսական ճգնաժամի հաղթահարման հետ:

Բոլորովին վերջերս ԱՄՆ և Իսրայելի հետազոտողները էկոնոմետրիկ մոդելավորման ճանապարհով հիմնավորել են, որ արժեթղթերի շուկայի օրինակով, վերջին համաշխարհային ֆինանսական ճգնաժամին ավելի հեշտ են դիմակայել այն երկրները, որտեղ վարկատուների շահերի պաշտպանությունը առավել ուժեղ հիմքերի վրա է [1]:

Համաշխարհային բանկի և Հարվարդի համալսարանի հետազոտողները կատարել են 129 երկրների գծով, 25 տարվա շրջանում, վարկատուների շահերի պաշտպանության և վարկատուների ու տնտեսական այլ ցուցանիշների փոխառնչությունների վերլուծություն: Գիտնականները ցույց են տվել, որ 129 երկրների գծով վարկատուների շահերի պաշտպանվածությունը և վարկատուների համար վարկերի տեղեկատվության հասանելիությունը էապես պայմանավորում է երկրում վարկավորման ծավալի հետ. այսինքն՝ որքան բարձր է վարկատուների պաշտպանվածությունը և որքան համապարփակ է վարկային ռեգիստրի տեղեկատվությունը, այնքան բարձր է ՀՆԱ-ի մեջ վարկավորման ծավալը երկրում [2]:

Համաշխարհային բանկի վարկատուների և վարկառուների իրավունքներին վերաբերող հաշվետվական աշխատանքում [6] կարևորվում է վարկատուների շահերի պաշտպանությունը զարգացող և հետանցումային երկրների համար, որտեղ խնդրի պատշաճ կարգավորման գլխավոր հիմնավորումը այն փաստն է, որ զարգացող տնտեսությունները ավելի են կախված վարկավորման գործունեությունից և որ այդ վարկավորումը էապես ազելափակվում է վարկատուի իրավունքների անկատարության արդյունքում: Աշխատանքում նշվում է, որ այն դեպքում, երբ վարկատուները թույլ են պաշտպանված վարկի տոկոսադրույքի չափը էապես բացատրվում է վարկառուի անվճարունակության ռիսկով: Վերջապես, նույն աղբյուրում նշվում է նաև, որ վարկատուների պաշտպանության իրավական լուծումները ավելի քան բավարար չեն այն դեպքում, երբ դատական համակարգը այս ոլորտում արդյունավետ չէ [6]: Նման կարծիքի են նաև Համաշխարհային բանկի այլ փորձագետները [7], որոնք 2007 թ. «Ե՞րբ են գործում վարկատուների իրավունքները» հետազոտության մեջ, որպես հիմնական եզրակացություն նշվում է, որ վարկատուների իրավունքների կատարելագործումը ուղղակիորեն ազդում է վարկավորման ծավալների

ավելացման և երկրի ֆինանսական համակարգի զարգացման վրա՝ միևնույն ժամանակ ընգծելով, որ վարկատուների իրավունքների պաշտպանությունը գրեթե անհրաժեշտ է առանց արդյունավետ դատական համակարգի առկայության: Համաշխարհային բանկի հետազոտողները որպես եզրակացություն նշում են «Անհրաժեշտ է ենթադրել, որ վարկատուների պաշտպանության ինստիտուտի բարեփոխումները պետք է ուղղվեն դատական գործընթացերի հետ հնարավորինս չհատվելու ապահովմանը: Նշվածը կարելի է ապահովել արտադատական համակարգի ներմուծմամբ կամ դատական գործընթացների այնպիսի կազմակերպմամբ, որ նվազեցվի օրենսդրության կիրարկման դատական դիսկրետությունը» [7, էջ 2, 20-21]: Արտադատական համակարգը խրախուսվել է նաև լատինամերիկյան երկրներում վարկատուների շահերի պաշտպանության վերաբերյալ կատարված հետազոտության մեջ [20]:

Վարկատուների պաշտպանությունը կարևորվում է նաև Չինաստանում, որտեղ խնդիրը արդիականացվում է կառավարության կողմից: Որպես խնդրի լուծման լծակներ 2009 թ. հունիս ամսին կառավարությունը վարկատուների շահերի պաշտպանությունը հռչակել է, որպես ֆինանսական վերահսկող մարմնի գլխավոր խնդիրներից մեկը, ինչպես նաև կոչ է արել ուժեղացնել ֆինանսական ոլորտի օրենսդրության հասարակական ինտեգրվածությունը [8]:

Միջազգային ֆինանսական ձգնաժամի և վարկատուների պաշտպանության խնդրի փոխառնչության ուղղությամբ ԱՄՆ ֆինանսական հետազոտողի կողմից առաջադրված 5 ռազմավարություններից մեկը վերաբերում է ֆինանսական համակարգի առողջացմանը, որտեղ հեղինակը կարևորում է վարկառուների վարկունակության գնահատման մեջ անորոշության մեղմացման լուծումները [11]:

Ընդհանուր առմամբ մի շարք ուսումնասիրված երկրներում, հատկապես ԱՄՆ-ում, եվրամիության որոշ երկրներում վարկատուների շահերի պաշտպանության գծով գործում են խնդրի իրավական կարգավորման ակտիվ ինստիտուտներ, մասնագիտացված իրավաբանական ընկերություններ, դատարաններ, ինչպես նաև օրենսդրության մեջ հստակ ամրագրված ու կարևորված են վարկատուների պաշտպանության հարցերը, որոնց շուրջ դիտարկումները ներկայացված են սույն աշխատանքի հաջորդ բաժիններում:

### **Վարկատուների պաշտպանության օրինակելի լուծումների ներկայացումը**

Հայաստանի Հանրապետությունում վարկատուների շահերի պաշտպանության ինստիտուտի կատարելագործման ուղղությամբ, հաշվի առնելով իրավիճակի վերլուծությունը, միջազգային փորձը և ուսումնասիրված

հեղինակային հետազոտությունները, սույն աշխատանքում ներկայացվում են լուծման հետևյալ ուղղությունները.

## 1. Մասնագիտացված ֆինանսական դատարանի և պրոֆեսիոնալ իրավական միջնորդ կառույցի ստեղծում.

Վարկատուների շահերի պաշտպանության իմաստով, Հայաստանում մասնագիտացված ֆինանսական դատարանի ստեղծումը հիմնավորվում է վարկավորման վիճելի գործընթացներում մեր երկրում դատական համակարգի ոչ ձկուն գործունեությամբ, վճիռների կայացման մեջ մասնագիտացված և փորձագիտական տարրի անկայունությամբ, վարկառուների անվճարունակության գործերի քննման և վճիռների կայացման էական ուշացումներով<sup>2</sup>, որոնք բարձրացնում են վարկատուների ֆինանսական ռիսկերը: Ֆինանսական դատարանների ուղղությամբ կարևոր փորձ ունի Գերմանիան, որտեղ Գերմանիայի դաշնային ֆինանսական դատարանը հանդիսանում է հարկային և մաքսային խնդիրներին և դրանց առնչվող ֆինանսական վեճերի արդարադատության բարձրագույն մարմինը: Այս կառույցը Գերմանիայում զբաղվում է բոլոր տիպի ֆիսկալ խնդիրներով, բացի քրեական ուղղվածությամբ հարցերից: Իրավական իմաստով կառույցը անկախ է ու հավասարազոր այլ սոցիալական, քրեական գծով դատարաններին: Դատարանը կատարում է նաև ոլորտի օրենսդրության մշակման աշխատանքներ<sup>3</sup>:

2009 թ.-ին ֆինանսական դատարան է ստեղծվել նաև Չինաստանում: Կառույցը հիմնադրվել է Պուդոնգի ժողովրդական դատարանի կողմից: Այստեղ լսվում են բանկային համակարգի, արժեթղթերի և ապահովագրական շուկայի գործեր, բայց ոչ ավելի քան 7.1 մլն ԱՄՆ դոլար կազմող գործերը: Կառույցում չեն լսվում նաև քրեական բնույթի գործեր: Այսպիսի կառույցի ստեղծման նպատակներից մեկը Շանհայի, որպես միջազգային ֆինանսական կենտրոնի դիրքերի կայունացումն է: Դատարանը նպատակ ունի ներգրավելու ֆինանսական ոլորտի պրոֆեսիոնալների և փոխգործակցելու ֆինանսական ոլորտի հետ, քննելով ֆինանսական գործերը մասնագիտական մակարդակով, ինչը չի ապահովվել այլ դատարանների կողմից: Դատարանը ստեղծվել է այն

<sup>2</sup> Հայաստանի բանկերի միության կողմից իրականացվել է բանկերի մասնակցությամբ դատական գործերի ժամանակացույցերի վիճկագրություն, որտեղ նկատվում են դատական գործերի կայուն ուշացումներ:

<sup>3</sup> [http://www.deutschland.de/link.php?lang=5&category1=5&category2=203&link\\_id=761](http://www.deutschland.de/link.php?lang=5&category1=5&category2=203&link_id=761)  
<http://www.bundesfinanzhof.de/>



հիմքով, որ 2005-2007 թթ. Չինաստանում ֆինանսական բնույթի գործերը ավելացել են շուրջ 12 անգամ<sup>4</sup>:

Իռլանդիայի կենտրոնական բանկի կողմից 2003 թ.-ին ստեղծվել է Իռլանդիայի ֆինանսական ծառայությունների բողոքարկման անկախ տրիբունալը: Կառույցի անդամները նշանակվում են երկրի նախագահի կողմից<sup>5</sup>:

Ֆինանսական դատարանի փորձ առկա է նաև Ղազախստանում, որտեղ դեռ 2006 թ.-ին հիմնադրվել է «Մասնագիտացված ֆինանսական դատարան» կառույցը: Այս կառույցի վճիռների բողոքարկում կարող է կատարել միայն Ղազախստանի գերագույն դատարանը<sup>6</sup>:

Ֆինանսական դատարանի ստեղծման ակտուալության գծով ակտիվ քննարկումներ են իրականացվում նաև Ռուսաստանի Դաշնությունում<sup>7</sup>: Ֆինանսական դատարաններ կան նաև այլ երկրներում, Ֆրանսիա, Մալթա, Հոնգ Կոնգ, Սինգապուր և այլն:

Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական դատարանի ստեղծումը կարող է ապահովել առևտրային բանկերի և ֆինանսական շուկայի այլ մասնակիցների համար պրոֆեսիոնալ, ճկուն և արագ շրջանառվող պլատֆորմ: Հայաստանում Մասնագիտացված ֆինանսական դատարանը կքննի ֆինանսական բնույթի ոչ քրեական բոլոր գործերը: Նպատակահարմար կլինի նաև վարկատուների կողմից իրավական միջնորդ կառույցի ստեղծումը, որը վարկատուներին կօգնի դատական գործերի կազմման և պաշտպանության մեջ:

Նշենք, որ ԱՄՆ-ում վարկատուների շահերի պաշտպանության իրավաբանները լիցենզավորվում են ԱՄՆ սերտիֆիկացման խորհրդի կողմից [10]: Այս հանգամանքը և ընդհանրապես տարբեր երկրներում վարկատուների պաշտպանության գծով իրավական խմբերի, ընկերությունների և այլ ինստիտուտների մեծ տարածվածությունը վկայում է, որ Հայաստանում նույնպես անհրաժեշտ է ապահովել նաև վարկատուների իրավունքների պաշտպանության պրոֆեսիոնալ իրավական ինստիտուտ:

<sup>4</sup> <http://www.clausen.com/index.cfm/fa/news.detail/story/b3cd64e8-3f91-40ec-a55e-8d790554070c/China Opens Its First Finance Court.cfm>

<sup>5</sup> <http://www.ifsat.ie>

<sup>6</sup> <http://www.rfca.gov.kz/448>

<sup>7</sup> <http://www.akdi.ru/scripts/articles/smotri.php?z=2528>

## 2. Կոլեկտորային գործունեություն

Կոլեկտորային գործունեությունը ներկայումս մեծ տարածում ունի ինչպես Եվրամիության երկրներում և ԱՄՆ-ում, այնպես էլ Ռուսաստանի Դաշնությունում: Այս ինստիտուտի արդիականությունը ակնհայտ է, բայց լրացուցիչ կարևորվում է այն երկրների համար, որտեղ ֆինանսական ոլորտի օրենսդրությունը լիարժեք գործուն չէ և որտեղ բավարար չափով ձկուն չէ դատական համակարգը

Կոլեկտորային գործակալության ստեղծման եղանակները՝

- Առաջին մակարդակի կոլեկտորային գործակալություններ
  - Առաջին մակարդակի գործակալությունը ստեղծվում է վարկատուի կողմից, որպես առանձին բաժին, մասնաձյուղ.
  - Սովորաբար ավելի ձկուն են, քանի որ խնդրահարույց դեպքերը բացահայտում են ավելի վաղ
  - Օրինակ ԱՄՆ-ում չեն ենթարկվում FDCA օրենքին, ինչը լրացուցիչ առավելություններ է տալիս վարկատուին
- Ֆինանսական միջնորդի կողմից չստեղծված կոլեկտորային գործակալություններ:

## 3. Տոկսիկ ակտիվների կառավարում

Վերջին շրջանում տոքսիկ ակտիվների պետական կառավարման ակտիվ փորձ է նկատվել ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և այլն: Ընդ որում այս առնչությամբ կիրառվում ե տարբեր մոդելներ՝ պրոբլեմային ակտիվների գնման և հետագա սպառման իրավական լուծումներ համար: Տոքսիկ ակտիվների կառավարումը կարևոր միջոցառում է և կարելի է համարել պետության գործուն աջակցություն, թեկուզ ոչ մեծ ներարկումներով և թեկուզ ընդհանուր բանկային համակարգում ոչ մեծ պրոբլեմային ակտիվների առկայության պայմաններում:

Տոկսիկ ակտիվների կառավարման նպատակը բանկերի հավելչիռները տոքսիկ ակտիվներից ազատելն է, ինչը համաձայն փորձի նախաձեռնվում է պետությունների կողմից:

### ԱՄՆ

Պետական-մասնավոր գործընկերության ներդրումային ծրագիր (Public Private Partnership Investment Program-PPPIP)

Նախատեսվում է 500 մլրդ – 1 տրլ դոլար հիփ. «վատ» վարկերի և հիփ. «վատ» արժեթղթերի հետգնում բանկերից

### **Գերմանիա**

«Վատ» բանկի ստեղծման ծրագիր

200 մլրդ. եվրոյի չափով «տոքսիկ» ակտիվների հետգնում

Գինը սահմանվում է տոքսիկ ակտիվի արժեքի 90%-ի չափով և պահվում է 20 տարի ժամկետով

### **Ֆրանսիա**

Ֆրանսիայի պետությունը տալիս է բանկերին սուբորդինացված փոխառություններ:

### **Ռուսաստան**

Շուկայի հետևյալ մասնակիցների կողմից առաջարկներ են եղել ստեղծել «վատ» բանկ

Կառավարիչ Կազմակերպություն «Ալֆա-Կապիտալ»

Ավանդների երաշխավորման գործակալություն (ԱԵԳ)

Կոլլեկտորային գործակալությունները ստեղծել են «վատ» վարկերի սեփական հիմնադրամ՝ ՓՓՀՆ «Кредитный капитал»:

Ներդրողների միջոցների հաշվին հիմնադրամը գնում է բանկային մանրածախ խնդրահարույց վարկերի պորտֆելներ՝ գրավով ապահովված կամ երաշխավորված ավտովարկեր և սպառողական վարկեր

## **4. Ֆինանսական տեղեկատվության արդյունավետ ենթակառուցվածքի ստեղծում**

### **4.1 Գրավի կենտրոնացված կառավարման համակարգ**

Գրավի կենտրոնացված համակարգի գծով ներկայումս լուրջ աշխատանքներ են արվում Եվրամիությունում, Եվրոպայի կենտրոնական բանկի կողմից: Այս համակարգի նպատակը գրավի կառավարման միջսահմանային և երկրի ներքին խնդիրների համակարգումն ու միասնական պլատֆորմի ստեղծումն է և հետևապես լիկվիդայնության արդյունավետ կառավարումը<sup>8</sup>: Ծրագիրը հիմնավորվում է այն իմաստով, որ ներկայումս Եվրամիությունում առկա է լիկվիդայնության ապահովման բարձր «պահանջարկ» և այ իմաստով շուկայի

<sup>8</sup> <http://www.ecb.int/paym/cons/html/ccbm2cons.en.html>

մասնակիցների իրարանցում: Գրավի կոնտրոնացված համակարգը նաև Բազել II-ի պահանջներից է:

Իսրայելի բանկերի գործունեության մասին օրենքում<sup>9</sup> կարևորվում է գրավի ավտոմատ կառավարման համակարգի ստեղծումը բանկում: Օրենքում նախատեսվում է, որ առևտրային բանկերը պետք է ունենան գրավի տվյալների բազա, որը պետք է մշտապես թարմացվի և պարունակի գրավի, գրավատու մասին մի տեղեկատվություն:

Ներկայումս գոյություն ունեն նաև գրավի կենտրոնացված համակարգերի նախագծման մասնագիտացված կազմակերպություններ [14]:

*Հայաստանի Հանրապետությունում կա ակնհայտ անհրաժեշտություն գրավի արդյունավետ կառավարման օրենսդրական և կազմակերպչական լուծումների ապահովման, հաշվի առնելով միայն այն հանգամանքը, որ շարժական գրավի գծով առկա են բանկերի դեմ խաբուսիկ գործառնությունների մեծ հավանականություն:*

*Այս առնչությամբ նպատակահարմար է ՀՀ առևտրային բանկերի կողմից ստեղծել գրավի կենտրոնացված համակարգ: Համակարգը պետք է լինի անկախ երկրի կադաստրային մարմիններից, դրան կմասնակցեն բոլոր առևտրային բանկերը, այն կունենա կուտակային սկզբունք, այսինքն սթարթ ափ շրջանում համակարգ կնուտքագրվեն բանկերի կողմից տնօրինվող ընթացիկ գրավների մասին տեղեկատվությունը և հետագայում՝ բոլոր գրավները, որոնք մշտապես կպահպանվեն համակարգում:*

## 4.2 Հասանելի վարկանշավորում և վարկանշավորման ակտիվացում

Վարկանշավորումը անփոխարինելի գործիք է բոլոր առաջամետ շուկայական տնտեսություններում: Ներկայումս զարգացած տնտեսություններում առկա են վարկանշավորում իրականացնող որոշ խոշոր կազմակերպություններ S&P, Moody's, Fitch: Վերջիններիս առաջարկվող պրոդուկտները էապես թանկ են և կարելի է ասել զարգացող տնտեսություններում, դրանց կայացումը և վարկանշման ծածկույթի մեծացումը խիստ երկարաժամկետ խնդիր է: Այնուամենայնիվ, շատ երկրներում գործում են վարկանշման լոկալ կառույվներ: Այստեղ հիմնական խնդիրը վարկանշավորող կազմակերպության բրենդի ձանաչումն է: Այսպիսի վարկանշավորող կազմակերպություններ առկա են օրինակ Ճապոնիայում Japan Credit Rating Agency, Կիպրոսում Capital Intelligence Ltd, Կանադայում Dominion Bond Rating Service, Հնդկաստանում:

<sup>9</sup> <http://www.bankisrael.gov.il>

## **Բանկերի միջազգային ճանաչվածության և ինտեգրման ուղղությամբ աջակցություն**

Միջազգային ֆինանսական շուկաներում բանկային գործունեության լիարժեք իրականացումը պայմանավորվում են մի շարք խնդիրներով: Բանկային այնպիսի գործարքները, որոնցից են ակրեդիտիվը, բանկային երաշխիքները և այլն, պահանջում են միջազգային բանկերի կողմից լոկալ բանկերի ճանաչում: Հակառակ դեպքում այս գործարքները մերժվում են՝ առևտրային քաղաքականության սկզբունքով:

### **Վարկատուների պաշտպանության օրենսդրական լուծումները**

*Օրենսդրական լուծումները հիմնականում շաղկապված են անվճարունակության խնդրի հետ*

*Միջազգային արժույթային հիմնադրամ, “Orderly & Effective Insolvency Procedures”*

*Օրենսդրությունը պետք է թույլ տա վարկատուներին ակտիվ մասնակցություն ունենալ անվճարունակության բացահայտման և այլ իրավական գործընթացներին: Օրենքում պետք է ամրագրվի, որ վարկատուն իրավունք ունի ստեղծել վարկատուների հանձնաժողով:*

*Fraudulent conveyance – վարկի մարումից խուսափելու համար օտարման գործարքների խնդրի շուրջ ԱՄՆ-ում կա երկու օրենք՝ Uniform Fraudulent Transfer Act (“UFTA”) և Bankruptcy Code*

*Օրենքը վերահսկում է մտադրաբար և ոչ խելամիտ արժեքով օտարում, մինչև անվճարունակ ճանաչվելը:*

*Շվեյցարիայում սնանկության մասին օրենսդրությամբ ամրագրված է, որ*

*եթե վարկատուն ունի վարկառուի կողմից չվճարված պարտքերի փաստաթուղթ, կամ այն վարկատուն, որը ճանաչվել է սնանկ, կարող է գործ հարուցել ընդդեմ այն երրորդ անձի, ով շահել է վարկառու կողմից կատարված խաբուսիկ գործարքից:*

*Կանադայում “The Creditors’ Relief Act” օրենքը*

*Ընդհանուր առմամբ, ուսումնասիրելով վարկատուների պաշտպանության միջազգային ինստիտուտները, ակնհայտ է, որ խնդիրը ունի իրավական խորը և բազմաբնույթ լուծումներ, ինչի մասին վկայում են մի շարք հեղինակավոր աղբյուրներ [9]:*

*Վարկատուների պաշտպանության ինստիտուտը էապես զգայուն է դատական գործընթացների արդյունավետության նկատմամբ և օրենսդրության կատարելիությունը բավարար հանգամանք չէ:*

*Հայաստանի Հանրապետությունում վարկատուների պաշտպանության ինստիտուտի օրենսդրական լուծումները լիարժեք չեն, ներառված են առանձին օրենսդրական ակտերում, ինչը չի ապահովում լուծումների ընդհանրական ու համագարկային մոտեցում: Առանձին դեպքերում, վերոհիշյալում դիտարկված ուղղություններով... Անհրաժեշտ է ՀՀ օրենսդրության մեջ հստակ տարանջատել պաշտպանված և անպաշտպան վարկատուներին, ինչպես դա արվում է միջազգային փորձում [5]: Ինչպես նաև վերը նշված ուղղություններով առանձին լուծումներ:*

## Գրականություն

1. Galina Hale, Assaf Razin, Does creditor protection mitigate the likelihood of financial crises and their effect on the stock market?, Federal Reserve Bank of San, Tel Aviv University, August 2009.
2. Simeon Djankov, Caralee McLiesh, and Andrei Shleifer, Private Credit in 129 Countries, Revised, World Bank, and Harvard University, 2006.
3. Keith G. Radner, Wendell H. Adair, A Lesson in Relative Rights of Secured Creditors, TMA International Headquarters, Jan 1, 1999.
4. Nasser Saidi, **Insolvency And Creditor Rights In The MENA Region**, Dubai International Financial Centre Authority, Hawkamah Institute for Corporate Governance, **Middle East Economic Survey**, VOL. LII, No 23, 8-Jun-2009.
5. Rights & Responsibilities (For Secured and Unsecured Creditors) - <http://www.itsa.gov.au/dir228/itsaweb.nsf/docindex/creditors-%3Erights+and+responsibilities-%3Erights+&+responsibilities?opendocument>
6. Report of Working Group on Debtor Creditor Rights, Debtor Creditor Rights Working Group, The World Bank, Washington, D.C. Symposium, 09/29/1999
7. Mehnaz Safavian, Siddharth Sharma, When Do Creditor Rights Work? The World Bank Financial and Private Sector Vice Presidency Enterprise Analysis Unit, August 2007.
8. Circular of the State Council Concerning Strengthening the Administration of Financial Creditor's Rights in the Structural Reform of Medium- and Small-sized State-owned Enterprises and Collective Enterprises, June 5th, 2009 - <http://www.chinesewalker.cn/2009/06/05/circular-of-the-state-council-concerning-strengthening-the-administration-of-financial-creditors-rights-in-the-structural-reform-of-medium-and-small-sized-state-owned-enterprises-and-collective-ent/>
9. John L Vague, **The Rights of Creditors when a Company Fails**, FCA ACIS AFNZIM Fellow ICANZ – Partner - [http://www.mvp.co.nz/articles/creditors\\_rights.htm](http://www.mvp.co.nz/articles/creditors_rights.htm)
10. Certification Program for Creditors' Rights Specialists, Certifying Lawyers in the Specialty Areas of Creditors' Rights La, American Board of Certification<sup>sm</sup> - [www.abworld.org](http://www.abworld.org).
11. Morris Goldstein, The Subprime and Credit Crisis, Paper based on transcript of speech presented at the Global Economic Prospects meeting, Peterson Institute for International Economics, April 3, 2008.
12. Michael Graff, Legal Origin and Financial Development: New Evidence for Old Claims? The Creditor Rights Index Revisited, KOF Swiss Economic Institute, Zurich, KOF Working Papers, No. 197, April 2008.
13. Rune Stenbacka, Thomas Gehrig, Information Sharing in Banking: A Collusive Device? Universität Freiburg and CEPR, London, Swedish School of Economics, Helsinki, 29. January 2000.
14. Solution Highlight Document, Confidential Paper, Digital Master Collateral, eBworx, 2009.

15. The Creditors' Relief Act, Chapter C-46 of The Revised Statutes of Saskatchewan, 1978 (effective February 26, 1979) as amended by The Revised Statutes of Saskatchewan, 2004, c.65; and 2009, c.5.
16. Creditor Rights Protection, Ultimate Ownership and the Debt Financing Costs and Ratings: International Evidence Narjess Boubakri HEC Montréal Finance Department 3000, Côte Sainte Catherine Montréal, Québec, Canada H3T 2A7
17. Dennis J. LeVine, Secured Creditor's Rights to Contact Debtor's Subsequent to Bankruptcy Discharge When the Debtor Retains the Collateral Without Redeeming or Reaffirming, Dennis J. LeVine & Associates. P.A. Tampa, Florida
18. Atilano Jorge Padilla, Alejandro Requejo, The Costs and Benefits of the Strict Protection of Creditor Rights: Theory and Evidence, 2000
19. Gregory James, Panicos Demetriades, Simon Deakin Creditor Protection And Banking System Development In India, University of Cambridge, UK, University of Leicester, UK, University of Leicester, UK, Working Paper No. 08/25, August 2008
20. Arturo Galindo, Alejandro Micco, Creditor Protection and Financial Markets: An Overview of Empirical Evidence and Implications for Latin America Inter-American Development Bank, October 2003
21. A. Galindo, A. Micco Creditor Protection and Financial Markets: Empirical Evidence And Implications For Latin America, Federal Reserve Bank Of Atlanta, 2004.

**Հավելված  
Վարկատուների պաշտպանության միջազգային ցուցանիշների վերլուծություն**


*Արևելյան եվրոպայի և մերձավոր արևելքի երկրների վարկավորման գծով  
ցուցանիշներ\**

Երկրներ	Վարկավորում			
	Վարկավորման գծով իրավական պաշտպանության ցուցանիշ (0-10)	Վարկերի տեղեկատվության խորություն (0-6)	Պետական վարկային ռեզիստի ծածկույթի ցուցանիշ (15 տ. և բարձր բնակչության %)	Մասնավոր վարկային ռեզիստի ծածկույթի ցուցանիշ (15 տ. և բարձր բնակչության %)
Բելոռուս	2	5	2.4	0
Ուզբեկիստան	2	3	2.3	2.2
Ռուսաստան	3	4	0	10
Տաջիկստան	3	0	0	0
Թուրքիա	4	5	12.7	26.3
Բոսնիա և Հերցեգովինա	5	5	0	69.2
Ղազախստան	5	6	0	25.6
Լիտվա	5	6	8.9	7.2
Հայաստան	6	5	2.6	24.4
Խորվաթիա	6	3	0	71.8
Էստոնիա	6	5	0	20.6
Վրաստան	6	6	0	4.5
Սլովենիա	6	2	2.7	0
Կիրգիզիա	7	3	0	3.7
Մակեդոնիա	7	4	6.5	0
Ադրբեջան	8	5	3.1	0
Բուլղարիա	8	6	30.7	5
Կոսովո	8	3	..	35
Մոլդավիա	8	0	0	0
Լեհաստան	8	4	0	50
Ռումինիա	8	5	4.5	24.7
Ալբանիա	9	4	8.3	0
Կիպրոս	9	0	0	0
Լատվիա	9	4	3.5	0
Մոնտենեգրո	9	2	26.3	0
Ուկրաինա	9	3	0	3

Թվերը վերցվել են Համաշխարհային բանկի պաշտոնական աղբյուրներից, 2009 թ.



*Արևելյան եվրոպայի և մերձավոր արևելքի երկրների վարկավորման գծով հրավական պաշտպանության ցուցանիշ\**



Թվերը վերցվել են Համաշխարհային բանկի պաշտոնական աղբյուրներից, 2009 թ.

*Արևելյան եվրոպայի և մերձավոր արևելքի երկրների վարկավորման գծով հրավական պաշտպանության և մասնավոր վարկային ռեզիստորի բալերի էկոնոմետրիկ ցուցանիշներ*

*Վարկավորման գծով հրավական պաշտպանության ցուցանիշ (0-10)*

Միջին	6.384615385
Մեդիան	6.5
Մոդա	8
Միջ. մառ. շեղում	2.228486896
Շեղ. նորմ. բաշխ.	-0.598035266
Վարիացիայի թափ	7
Նվազագույն	2
Առավելագույն	9
Գումար	166
Քանակ	26

Հայաստանի թիվը՝ 6

*Մասնավոր վարկային ռեզիստորի ծածկույթի ցուցանիշ (15 տ. և բարձր բնակչության %)*

Միջին	14.73846154
Մեդիան	4.1
Մոդա	0
Միջ. մառ. շեղում	21.18733729
Շեղ. նորմ. բաշխ.	1.662651698
Վարիացիայի թափ	71.8
Նվազագույն	0
Առավելագույն	71.8
Գումար	383.2
Քանակ	26

Հայաստանի թիվը՝ 24.4

33 Երկրների գծով 2007 թ. առևտրային բանկերին վերաբերող ցուցանիշներ  
(մլրդ. Եվրո)\*

Երկրներ	Վարկավորման գծով իրավական պաշտպանության ցուցանիշ (0-10)	Վարկերի տեղեկատվության խորություն (0-6)	ՀՆԱ	Վարկ/ՀՆԱ	Դեպոզիտ/ՀՆԱ	Ակտիվներ /ՀՆԱ	Կապիտալ և պահուստներ /ՀՆԱ
Բելգիա	7	4	334.917	153.889	163.802	418.880	18.333
Գերմանիա	8	6	2428.200	129.330	118.701	314.047	14.496
Հունաստան	3	4	226.437	81.135	81.135	156.671	12.533
Իսպանիա	6	5	1050.595	167.544	125.852	280.460	19.635
Նրանսիա	6	4	1894.646	96.641	76.215	372.893	13.828
Իռլանդիա	8	5	189.751	332.489	166.643	704.794	39.184
Իտալիա	3	5	1544.915	115.434	82.367	220.556	17.132
Նիդեռլանդներ	6	5	568.664	172.510	131.536	382.300	18.816
Սլովենիա	6	3	34.568	81.870	56.063	122.491	10.293
Ավստրիա	7	6	270.782	144.592	114.524	332.200	29.522
Ֆինլանդիա	7	5	179.659	68.186	52.951	151.493	10.548
Պորտուգալիա	3	5	163.052	156.717	99.588	248.296	13.309
Բուլղարիա	8	5	28.899	65.393	68.701	104.547	11.005
Կիպրոս	9	0	15.667	261.823	335.161	581.730	49.839
Չեխիա	7	5	127.331	52.671	69.867	109.628	10.491
Դանիա	9	4	226.544	205.812	79.733	325.360	27.130
Էստոնիա	6	5	15.627	97.954	58.310	131.287	11.295
Հունգարիա	7	5	101.370	63.914	41.779	94.771	8.732
Իսլանդիա	7	5	14.851	534.723	284.847	852.708	53.175
Լատվիա	9	4	21.111	101.458	69.264	149.071	11.808
Լիխտենշտեյն	9	5	3.211	342.403	602.475	3227.089	61.806
Լիտվա	5	6	28.423	57.806	37.540	82.504	6.016
Մալթա	7	4	5.448	350.610	252.268	684.116	59.860
Նորվեգիա	7	4	284.053	104.238	63.351	138.555	7.103
Լեհաստան	8	4	310.613	38.305	37.566	71.257	6.227
Ռումինիա	7	5	123.847	34.107	31.887	58.185	5.833
Սլովակիա	9	3	54.857	44.819	57.523	90.554	5.168
Շվեդիա	5	4	331.226	71.940	56.052	157.767	9.000
Շվեյցարիա	8	5	317.202	155.909	294.239	658.825	33.151
ՄԹ	9	6	2044.133	194.100	222.545	463.939	24.581
Խորվաթիա	5	0	42.824	67.201	60.870	109.983	13.772
Թուրքիա	4	5	471.972	34.831	44.336	69.695	9.586
Հայաստան	6	3	7.100	13.460	14.035	24.707	5.232

Թվերը հավաքագրվել են Եվրոպական բանկային ֆեդերացիայի, Համաշխարհային բանկի, Եվրաստատի և ՀՀ ազգային վիճ. ծառայության պաշտոնական աղբյուրներից: